ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՊՐՎԱԾ ՀԱՎԱՏԸ

(Ղևոնդյանց և Վարդանանց տոների առթիվ)

Մեր լուսաբնակ հայրապետները, վեր-տրրվար ամսում, մեր եկեղեցական օրացույցի մեջ, գեղեցիկ մտածումն են ունեցել, մասնավոր կարևորությամբ համախմբելու Հայ Եկեղեցուն միայն հատուկ ազգային-եկեղեցական տոների շարքը, տոներ, որոնք սերտորեն կապված են հայ հավատի, հայ ժողովրդի ու հայրենիքի պատմության հետ:

Ամեն տարի, մեծ պահքից անմիջապես առաջ տոնախմբվող վերջին այդ հանդիսությունները իրենց ազգային-եկեղեցական խորհրդով ու նշանակությամբ, հոգևոր արթնության, բարեպաշտության, եկեղեցական ուխտապահության և իրավ հայրենասիրության ուսանելի հանգրվաններ են մեր Եկեղեցու և ժողովրդի համար:

Տոների այս շարքը բացվում է հայրենի հողի վրա երկրորդ դարի կեսերին, Ս. Գրիգոր Լուսավորչից առաջ, նոր կրոնի համար նահատակված **Սուքիասյան** վկաների և **Ոսկյան** քահանաների մարտիրոսությամբ, «որք հաւատով յաղթեցին, զխաւար կռապաշտութեան վանեալ հերքեցին և զմահս իւրեանց կանգնեցին յերկրի աշտարակ հզօր»,— ինչպես գրում է սրբազան շարականագիրը, ոգելով նրանց հիշատակը:

Մեր եկեղեցական օրացույցում նշված մյուս տոները վերաբերում են Ե դարի պատմական մեծ դեմքերին և իրադարձություններին:

Ե դարը հոգևոր, եկեղեցական, մշակութային և հայրենասիրության տեսակետից մեր պատմության բացառիկ և հերոսական ժամանակաշրջաններից մեկն է հանդիսանում, որն իր անջնջելի կնիքն է դրել մեր հետագա ողջ պատմության վրա:

Դարաշրջանի սկզբներին Հայաստանում ստեղծվել էր հոգևոր-մշակութային անհատնթաց մի շարժում, պայքարելու հանուն Հայ Եկեղեցու և հայ մշակույթի ինքնուրույնության: Այդ ճակատագրական, ծանր պայքարը սառաջ էր տարվում մեծ եռանդով, կրքոտությամբ, բայց խաղաղ ճանապարհով, դպրությամբ, քարոզչությամբ, մշակույթով:

Այդ շարժման ու պայքարի ղեկավարը, կազմակերպիչը և ոգին **Ս. Սահակ** հայրապետն էր, հայրենասեր և լուսամիտ «պարթևական տեսանող»-ը, որի ջերմ շունչի տակ հասակ առան, կազմակերպվեցին իրենց ապագա առաքելության և գործի համար **թարգմանիչների սերունդը և Վարդանանց հերոսները:**

Երկրորդ տոնը ուրեմն նվիրված է մեծ հայրապետի հիշատակին, որպես Ե դարի ազգային-եկեղեցական իրադարձությունների կենտրոնական դեմքի, թեև հունիս ամսին մեր Եկեղեցին նշում է «Սրրոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ» տոնը, միասին:

Երրորդ տոնը նվիրված է **Ատոմ Գնունի, Մանանհիր Ռշտունի** իշխաններին և նրանց գնդերին, շուրջ 500 հոգու նահատակության հիշատակին: Օրացույցում և մեր եկեղեցական մատենագրության մեջ հայրենիքի և հավատի այս անձնուրաց նահատակները ծանոթ են **«Ատոմեան զօրավարք»** անվան

տակ: Ատովմյանց նահատակությունը տեղի է ունեցել Ե դարում, Հազկերտի հրամանով, Վարդանանց պատերազմից երկու տարի առաջ, 449 թվականին, Անձևացյաց և Ռշտունյաց գավառներում: Ատոմ զորավարի հետ նահատակվել են, ըստ մեր վկայաբանության, որդին՝ Վարս Գնունի, Վարս Ոստանիկ, Ներսեհ Երվանդունի, Վարձավոր Արծրունի և ուրիշ իշխաններ: Իսկ Մանանհիրի հետ նահատակվել են մի շարք կվաներ, որոնցից ոչ ոք անվամբ չի հիշվում վկայաբանության մեջ:

Փետրվար ամսում նշվող մեր ազգային-եկեղեցական տոների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ե դարի հիսունական թվականներին նահատակ հայ հոգևորականների հիշատակին նվիրված հանդիսությունը, որոնք ծանոթ են **«Սուրբ Ղևոնդեանք քահանայք»** անվամբ:

Ղևոնդյանց քահանաների նահատակությունը սերտորեն կապված է 451 թվականի Վարդանանց հերոսամարտի պատմության հետ:

Ղևոնդյանք նահատակվեցին 454 թվականին, հուլիսի 31-ին, Ապար աշխարհի Ռևան գյուղի մոտ, Վարդանանց պատերազմից երեք տարի հետո:

Ս. Ղևոնդյանք, նահատակ քահանաների այդ լուսե փաղանգը, Հայ Եկեղեցու պարծանք սրբերն են, «ախոյեանք Եկեղեցւոյ», որոնց նահատակությամբ «պայծառապէս զարդարեցան եկեղեցիք Հայաստանեայց»:

«Ղևոնդյանց վրա կանձնավորվի **հայրենիքի** և **հավատքի նվիրումին գաղափարը:** Վարդանանց ընկեր և քաջալերող, ժողովուրդին կյանքին մեջ բարձր պահեցին կրոնքի սրբությունը, և ամենեն ականավոր գործիչները եղան անոնք **Հայ Եկեղեցիով հայ ազգությունը** ապրեցնելու և պահպանելու սկզբունքին» (Սուրբք և տոնք», էջ 215):

Նահատակված հոգևորականների մեջ էին Հովսեփ կաթողիկոս Հողոցմեցին (Վայոց ձոր), Ռշտունյաց Սահակ եպիսկոպոսը, Վանանդեցի Ղևոնդ երեցը, Աղբակեցի Մուշե երեցը, Բագրևանդացի Արշեն երեցը, Արարատեցի Սամվել երեցը (Արած գյուղից), Քաջաջ սարկավագը (Ռշտունիքից), Աբրահամ սարկավագ Արարատեցին (Արած գյուղից) և պարսիկ դենպետը (Նյուշապուհ քաղաքից): Հայրենասեր նահատակ հոգևորականները պատմության անցան որպես **Ղևոնդյանք,** Վանանդեցի Ղևոնդ երեցի անունով, որը բոցավառ և հոգելից եկեղեցական էր, թե՛ խոսքով և թե՛ գործով, «Աւարայրի արծիւ, այրն հաւատարիմ և ճշմարտապաշտ, լուսաւորիչն ամենեցուն Ղևոնդիէ՞, սուրբ վարդապետն, ծաւալեալ լոյս գիտութեան յոգիս արանց կատարելոց»:

Ս. Ղևոնդյանց լուսապայծառ անունն ու սուրբ հիշատակը, որպես հայ հավատի քաջարի նահատակների և հայրենասեր հոգևորականների, նվիրական և թանկ են եղել մեր Եկեղեցու պատմության ողջ ընթացքում:

Ղևոնդյանց անձնուրաց նահատակությունը, մահվան դեմ քրիստոնեական խիզախումը խորունկ ներշնչման և խիզախության անսպառ աղբյուր են հանդիսացել մեր հոգևորական ապագա սերունդների համար. նրանց անձնազոհությունը նոր թափ, նոր լիցք է տվել հայ հոգևորականությանը՝ ծառայելու և ի պահանջել հարկին նահատակվելու հանուն այն սրբությունների և վեհ գաղափարների, որոնց համար **մեռան** Ղևոնդյանք, որպեսզի **ապրեն** Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը:

Հիշատակելի և փառավոր ուղի է անցել հայ հոգևորականությունը Ե դարից մինչև մեր օրերը:

Ս. Ղևոնդյանց արժանավոր հաջորդները, մեր սուրբ հայրապետներն ու եռամեծ վարդապետները պայծառ ու խորունկ գիտակցությունն են ունեցել քրիստոնեական պատվիրանների և ազգային սրբության, որոնց հաղթանակի համար մի վայրկյան իսկ չեն վարանել զոհելու իրենց կյանքը: «Ոչ ի կապանաց զանգիտեն և ոչ ի գազանաց երկնչին..., զմահ քան զկեանս ընտրեն»: Այս ոգին դարերի հետ, որպես սրբազան ժառանգություն, կրակե կտակն է եղել հայ հոգևորականության:

Փետրվար ամսվա մեջ, վերջին համազգային տոնը **Վարդանանց** պատերազմի հիշատակին և խորհրդին նվիրված եկեղեցական և ազգային հանդիսությունն է:

Օրացույցում այս ազգային տոնը նշվել է այսպես. «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմի»:

Պատերազմը տեղի է ունեցել 451 թվականի գարնանը, մայիսի 26-ին, Ծավարշան գյուղում, Տղմուտ գետի ափին, Ավարայրի դաշտում, ուր հերոսի մահով ընկան 1036 քաջարի մարտիկներ, նաև «նախարարք և զօրավարք»:

Ոսկեգրիչ Եղիշե պատմիչը իր հայրենաշունչ դյուցազներգության՝ պատմություն «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» աշխատության մեջ, որն ընդգրկում է 35 տարիների մի ժամանակաշրջան (428—

464), տվել է անունները Ավարայրի ճակատամարտում Եկեղեցու և հայրենիքի սեղանի վրա պատարագված 9 զորավարների. քաջն Վարդան, Մամիկոնյանց տոհմից, հայոց սպարապետ և «զօրագլուխ առաքինեաց»՝ 133 քաջերով. կորովին Խորեն Խոռխոռունի՝ 19 ընկերներով. Պալունյաց քաջն Արտակ՝ 57 ընկերներով. զարմանալին Տաճատ, Գնթունյաց տոհմից՝ 19 մարտիկներով. Դիմաքսյան տոհմից իմաստունն Հմայակ՝ 22 ընկերներով. հրաշակերտն Ներսեհ Քաջբերունի՝ 7 ընկերներով. մանուկն Վահան Գնունի՝ 3 ընկերներով. Ընձայեցի արդարն Արսեն՝ 7 ընկերներով և Սրվանձտյանց տոհմից առաջադեմն Գարեգին՝ իր երկու եղբայրներով և 18 ընկերներով. և այլ քաջեր, մնացած ամբողջ խումբը, **«զինուորք Հայոց Աստուծոյն»**, «որք գրեցին զանուանս իւրեանց ի դպրութեան կենաց և հեղին զարիւնս իւրեանց ի նորոգումն Եկեղեցւոյ»:

1500 տարիներ մեզ բաժանում են Ղևոնդյանց և Վարդանանց ծանր, հերոսական օրերից:

Վարդանանց պատերազմը մի պայքար էր հանուն լույսի, հավատի, հայրենիքի և ազատության:

Հազկերտի կրոնական մոլեռանդության և բռնակալության դեմ ծառացավ հայ ժողովուրդը իր կրոնա-բարոյական բարձր գաղափարներով, ազգային, հայրենասիրական ոգով:

«Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել...»:

Հայությունը Ավարայր իջավ հավերժորեն ապրելու, «մահուամբ զմահ կոխել»-ու համար:

«Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս ևեթ ժառանգեսցուք, բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք»: Ռազմի դաշտում եկեղեցական ուխտապահությունն ու հայրենասիրությունը իրար էր բերել բոլորին, դարձրել մի սիրտ և մի հոգի: Բոլորն էլ հավասարապես լցված էին արիական ոգով և պատրաստ «ի մեռանել և ի սպանանել, **զի բարձրասցի կողմն ճշմարտութեան և մի՛ քակտեսցի ուխտն հաւատոց մերոց»:**

Քրիստոնեությունը եղավ հայ ժողովրդի իդեալը, նրա ազգային նկարագիրը, մտածման ձևը, ապրելու կերպը:

Սխալվեցին Հազկերտները բոլոր դարերի, որոնք կարծում էին, թե **«իբրև զհանդերձ ունել մեզ զքրիստոնէութիւն»:**

Ավարայրից հետո հայոց պատմության հետագա դարերը, իբր ներշնչարան, թելադրանք և տեսիլք ունեցան քրիստոնեական այդ կենարար ոգին և շունչը: Սեր ժողովրդի և Եկեղեցու կյանքի ուղին լուսավորվեց Ղևոնդի և Վարդանի հավատով և օրինակով: Քրիստոնյա մնալու և հայ ապրելու համար, մեր ժողովուրդը տվեց իր ամենաթանկագին գանձը՝ «գոյիւ չափ զկեանս իւր»:

Արքա՞ն ճշմարտություն կա այն հաստատման մեջ, ըստ որի քրիստոնյա Արևմուտքը աստվածաբանական դպրոցներ ստեղծեց, դավանաբանական վեճեր բորբոքեց, մինչ հայ ժողովուրդը **ապրեց քրիստոնեությունը** և իր կյանքով ապրեցրեց Ավետարանի ճշմարտությունները. «զի գիրն սպանանէ, այլ ոգին կեցուցանէ»:

Այստեղ է մեծությունը, վեհությունը Ղևոնդյանց նահատակության և Վարդանանց հերոսամարտի: Դ դարի սկզբներին, հազիվ ազգորեն, պետականորեն իր հոգին բացած քրիստոնեության լույսին, հայ ժողովուրդը հարյուր տարի հետո, Ե դարում, գիտակցորեն և մասամբ էլ տարերայնորեն դիմադրեց և պաշտպան կանգնեց իր խղճի ազատության, ազգային ավանդություններին, ոգիին, բարոյական, իմացական ըմբռնումներին և սկզբունքներին:

Ավարայրը, քրիստոնեական լույսին բացված, Սահակ-Սեսրոպյան հրաշքի մեջ պայծառացած, հայ հոգու, հայ մտքի գաղափարական բարձունքն է, Հայ Եկեղեցու հերոսացումը և քրիստոնյա հայ ժողովրդի հավաքական սրբացումը:

Այսօր էլ Ղևոնդյանք և Վարդանանք մեզ համար հանդիսանում են հավատի, հայրենասիրության, տեսիլքի և խոյանքի ներշնչարաններ, լույսի սերմնացաններ, ապրված համոզմունքների գերազանց տիպարներ:

Ապրե՛նք Ղևոնդյանց և Վարդանանց ոգով ու տեսիլքով, և ապրեցնե՛նք նրանց հավատն ու հայրենասիրությունը մեր կյանքի մեջ, մեր գործերի մեջ:

Ա՛յս է մեր սրբերի, նահատակների եկեղեցական ուխտապահության և հայրենասիրության պատգամն ու թելադրանքը: